ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ

« 10 » հունիսի 2026

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Ազատյան,

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ միջև 2026 թվականի մարտի 16-ին կնքվել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման մասին ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2- ԵԽ-12-Խ ծածկագրով պայմանագիրը:

Համաձայն պայմանգրի 2.1.1 կետի՝ ապրանքը այմանագրով սահմանված ժամկետում չմատակարարելու դեպքում գնորդն իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի: Հաշվի առնելով, որ 2026 թվականի ապրիլ ամսից արդեն ներկայացվել է երեք հայտ՝ մասնավորապես ապրիլի 13-ին, ապրիլի 18-ին և ապրիլի 23-ին, որոնց համաձայն ապրանքը չի մատակարարվել, և դրանց վերաբերյալ կազմվել համապատասխան արձանագրություններ (կից ներկայացվում են արձանագրության պատճենները):

Արձանագրվում է, որ Ձեր կողմից խախտվել են պայմանագրով սահմանված 2.1.7 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները:

Վերոգրյալից ելնելով՝ Ձեզ տրամադրվում է 5 (հինգ) աշխատանքային օր ժամկետ՝ չմատակարարված ապրանքը (հավի միսը) մատակարարելու համար:

Հակառակ դեպքում, սույն ծանուցմամբ տեղեկացնում ենք, որ սահմանված ժամկետում ապրանքը չմատակարարելու պարագայում «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը պատրաստվում է լուծել 2026 թվականի մարտի 16-ին կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-ԵԽ-12-Խ ծածկագրով պայմանագիրը:

Կից ներկայացվում են արձանագրությունների պատճենները:

ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ. ՆԱՀԱՏԱԿՅԱՆ

ՀՀ, Արարատի մարզ, գ. Նոր-Խարբերդ
0236 6 00 25, 055377780
Էլ. հասցե՝ kharberd.childcarecenter@mlsa.am